ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0009, Աբովյան 27
Հեռ.՝ +374 10 56 53 53, Ֆաքս.՝ +374 10 54 27 79, էլ. փոստ՝ office@setcenter.am

REPUBLIC OF ARMENIA
«SETTLEMENT CENTER»
CLOSED JOINT-STOCK COMPANY
27 Abovyan str., 0009 Yerevan, Republic of Armenia
Tel: +374 10 56 53 53, Fax: +374 10 54 27 79, e-mail: office@setcenter.am

«29» 10 2025 թ.
№ 385ՁՀ
№

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Խուդաթյան

Կից Ձեզ եմ ներկայացնում 2025 թվականի հոկտեմբերի 19-ից 25-ը Սերբիա կատարած գործուղման հաշվետվությունը:

Գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվել են Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) կողմից:

**Գլխավոր տնօրենի**
**ժամանակավոր պապաշտոնակատար** **Նորայր Հարությունյան**

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**2025թ. հոկտեմբերի 19-ից 25-ը Սերբիա, Բելգրադ գործուղման արդյունքների մասին**

### 1. ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ

Նորայր Հարությունյան

### 2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ Գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

### 3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ / ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Սերբիա, Բելգրադ, 2025թ. հոկտեմբերի 19-ից 25-ը

### 4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

Գերմանական միջազգային համագործակցության ընկերություն (GIZ)

### 5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Ուսումնական այցը նվիրված էր «Էներգետիկայի ոլորտում թվային գործիքներ» թեմային:

### 6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ

Այցի ընթացքում Հայաստանի պատվիրակությանը ներկայացվեցին մի շարք պրեզենտացիաներ Սերբիայի էներգետիկայի ոլորտի և էներգետիկայի ոլորտում թվային գործիքների վերաբերյալ:

Ծանոթացանք Սերբիայի TSO-ի՝ /«Սերբիայի էլեկտրաէներգիայի փոխադրման ցանցի օպերատոր»/ EMS-ի /«Սերբիայի էլեկտրաէներգետիկ ընկերություն»/ կառուցվածքին, Սերբիայի էներգետիկայի ոլորտում թվային գործիքների կիրառման ընթացիկ իրավիճակին, EKC-ում մշակված և օգտագործվող Էներգահամակարգի շուկայի մոդելավորման գործիքներին, Էներգահամակարգի վերլուծության և ցանցի սիմուլյացիայի գործիքներին, Բաշխիչ ցանցերի ծրագրային ապահովման գործիքների մշակումներին, IMP-ում մշակվող Էներգետիկայի ծրագրային ապահովման գործիքներ SCADA, EMS, DMS:

TSO-ում ծանոթացանք Էներգետիկայի և շուկայի կառավարման Էներգակառավարման համակարգի (EMS) և շուկայի կառավարման համակարգի (MMS) գործիքներին, որոնք օգտագործվում են սերբական TSO-ի կողմից:

Սերբական SEEPEX էլեկտրաէներգիայի բորսայում ծանոթացանք Էլեկտրաէներգիայի բորսայում օգտագործվող թվային գործիքներին:

## 7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ, ԵԼՈՒՅԹՆԵՐ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ

Այցելեցինք EKC «Էլեկտրաէներգիայի համակարգման կենտրոն», քննարկումներ ունեցանք տնօրեն Բրանիսլավ Դուկիչի հետ, ով ներկայացրեց. Սերբիայի TSO-ի՝ /«Սերբիայի էլեկտրաէներգիայի փոխադրման ցանցի օպերատոր»/ EMS-ի /«Սերբիայի էլեկտրաէներգետիկ ընկերություն»/ կառուցվածքը, Սերբիայի էներգետիկայի ոլորտում թվային գործիքների կիրառման ընթացիկ իրավիճակը, ծանոթացանք EKC-ում մշակված և օգտագործվող էներգահամակարգի շուկայի մոդելավորման գործիքներին, էներգահամակարգի վերլուծության և ցանցի սիմուլյացիայի գործիքներին:

Այցելեցինք Շնայդեր Էլեկտրիկ, ծանոթացանք Բաշխիչ ցանցերի ծրագրային ապահովման գործիքների մշակումներին:

Այցելեցինք IMP /«Միխայլո Պուպինի ինստիտուտ»/, քննարկումներ ունեցանք Տնօրենի տեղակալ Ալեկսանդր Կառի հետ, ծանոթացանք ինստիտուտի կառուցվածքին և IMP-ում մշակվող Էներգետիկայի ծրագրային ապահովման գործիքներ SCADA, EMS, DMS:

TSO-ում ծանոթացանք Էներգետիկայի և շուկայի կառավարման Էներգակառավարման համակարգի (EMS) և շուկայի կառավարման համակարգի (MMS) գործիքներին, որոնք օգտագործվում են սերբական TSO-ի կողմից:

Այցելեցինք EMS-ի կառավարման սենյակ և սերվերների սենյակներ և ունեցանք քննարկումներ կարգավարների հետ:

Այցելեցինք Սերբական էլեկտրաէներգիայի բորսա SEEPEX, ունեցանք քննարկում SEEPEX-ի ղեկավար Դեյան Ստոյկեվիչի հետ, ծանոթացանք էլեկտրաէներգիայի բորսայում օգտագործվող թվային գործիքներին:

## 8. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ, ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Շարունակել Գերմանական միջազգային համագործակցության ընկերության հետ Էներգետիկայի ոլորտում թվային գործիքների զարգացման թեմայով, համագործակցել Սերբիայի EKC - Էլեկտրաէներգիայի համակարգման կենտրոնի հետ Հայաստանի էլեկտրաէներգետիկական շուկայի կառավարման նոր ծրագրի ստեղծման նպատակով:

## 9. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԱՄՍԱԹԻՎ

29.10.25